ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄ

ՊԱՐՈՆ Է. ԱՎԱՆԵՍՈՎԻՆ

Հարգելի պարոն Ավանեսով.

Ի պատասխան Ձեր 10.03.2021թ. գրության՝ Ավան վարչական շրջանի Խուդյակովի փողոցի հ.90 և հարակից շենքերի բնակիչների բողոքի վերաբերյալ, տեղեկացվում է, որ համաձայն «Տուրքերի և վճարների մասին» և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքների՝ ավտոլվացման կետի գործունեության համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թույլտվության տրամադրում չի նախատեսվում, ինչպես նաև, որպես սպասարկման ոլորտի գործունեություն, չի տրամադրվում թույլտվություն ժ.24.00-ից հետո աշխատանքի համար:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի առևտրի, սպասարկումների և գովազդի բաժնի աշխատակիցները եղել են նշված հասցեում, հանդիպել ավտոլվացման կետի տնօրինության հետ, հորդորել և պահանջել են պահպանել Երևան քաղաքում սահմանված լռության ժամերը (23.00-07.00) և շուտափույթ կարգավորել խնդիրը: Տնօրինությունը պատրաստակամություն է հայտնել պատկան մարմինների կողմից անցկացնել աղմուկի չափագրում, նորմատիվային չափորոշիչներին չհամապատասխանելու դեպքում կատարել ձայնամեկուսացման աշխատանքներ, որից բավարար արդյունք չստանալու դեպքում, գիշերային ժամերին անցնել ավտոլվացման այլընտրանքային եղանակի, այն է՝ առանց ավտոմատ սարքավորումների, ինքնահոս ջրամատակարարման և ձեռքով լվացման տարբերակի:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ